ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4
Հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

N 2189

08 ապրիլ 2026թ.

«Լայթս» ՍՊԸ
տնօրեն Գոհար Խանվելյանին
(Հասցե՝ ք. Երևան, Վարդանանց 28
էլ. փոստ՝ tender.tender.24@mail.ru)

Հարգելի՛ տիկին Խանվելյան,

Մասիսի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Լայթս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 25.02.2026թ. կնքվել է N ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/29-1 ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում Վաճառողը պարտավորվել է Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 21 օրացուցային օրվա ընթացքում մատակարարելու ընդհանուր թվով 6 հատ համակարգիչներ: Պատվիրատուն 02.04.2026թ. N 2056 գրությամբ դիմել է Վաճառողին՝ առաջարկելով նույն գրությունը ստանալու օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում կատարել մատակարարումները, հակառակ պարագայում կկիրառվեն գնումների մասին ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցներ՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությունը, սակայն մինչ օրս մատակարարումները կատարված չեն, իսկ գրությունը մնացել է անպատասխան:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով Մասիսի համայնքապետարանի և «Լայթս» ՍՊԸ-ի միջև 25.02.2026թ. կնքված N ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/29-1 ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությունը՝ պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված սույն

ծանուցումը Պատվիրատու կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Միաժամանակ առաջարկում եմ սույն ծանուցումը ստանալու օրվանից հաշված 3 (երեք) բանկային օրվա ընթացքում Ձեր ընկերության կողմից որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման ապահովումը՝ **198 000 (մեկ հարյուր իննսունութ հազար)** ՀՀ դրամի չափով և պայմանագրի ապահովումը՝ **132 000 (մեկ հարյուր երեսուներկու հազար)** ՀՀ դրամի չափով, վճարել Պատվիրատուի՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900 435 002 101 հաշվի համարին, այլապես դրանց գանձումը կիրականացվի ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սահմանված ժամկետում որակավորման և պայմանագրի ապահովումները Ձեր կողմից վճարված լինելու դեպքում Ձեր ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Վճարումները պետք է կատարել վերոնշյալ հաշվեհամարին, իսկ վճարումը հավաստող փաստաթղթերն անհրաժեշտ է բնօրինակով ներկայացնել ՀՀ Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանի աշխատակազմի գնումների բաժին, 3-րդ հարկ, 316 սենյակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ**

Կատ. Գնումների բաժնի
պետ՝ Ք. Խաչատրյան